Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 3

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԽՈՐՀՈՒՐԴ) ՆԻՍՏԻ

2026 թ. հուլիսի 14

Նախագահում էր՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին Խորհրդի անդամներ

Անուշ Թութիկյան	Ամերիկայի հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ
Վարդուհի Դադունց	«Մարդը կարիքի մեջ» ԲՀԿ
Հասմիկ Գևորգյան	«Արդարության նոր մշակույթ» ՀԿ
Գրիգոր Հովհաննիսյան	«Ակցիա սովի դեմ» հիմնադրամ
Նարե Սարգսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միություն
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Աննա Հովհաննիսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ
Նաիրա Ավետիսյան	Ֆիզիկական անձ
Նաիրուհի Սաֆարյան	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ
Անահիտ Նահապետյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
Տիրուհի Նազարեթյան	«Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա» հանրապետական միություն
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Արևիկ Հովհաննիսյան	«Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ
Աննա Մարտիրոսյան	«Հայկական Կարմիր խաչի ընկերություն» ՀԿ
Վահե Արզումանյան	«Սպիտակ ձեռնափայտ» ՀԿ
Մարգարիտ Ստեփանյան	«Կանայք հանուն բնության» ՀԿ
Անահիտ Պապիկյան	Ժողովրդավարության զարգացման

	հիմնադրամ
Նաիրա Հարությունյան	«Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ
Սևակ Գալստյան	Ֆիզիկական անձ
Հերմինե Այվազյան	«Արևամանուկ» հիմնադրամ
Քրիստինե Մխիթարյան	«ՕքսԵՋԵՆ» հիմնադրամ
Անահիտ Գևորգյան	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հկ
Հունան Հունանյան	«Սատար» ՀԿ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Արտաշես Տոռոզյան	«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
Ժասմենա Խաչատրյան	«Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ

Բացակայում էին

Աննա Մելիքյան	«Փինք» ՀԿ
Աննա Դանիելյան	«Վիններթ Գորիս» զարգացման հիմնադրամ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին՝

Արտյոմ Սմբատյան	ԱՍՀ նախարարի առաջին տեղակալ
Ռոզա Բաբայան	ԱՍՀ նախարարի խորհրդական
Նվեր Կոստանյան	Մամուլի քարտուղար
Գայանե Ղարագյոզյան	ԱՍՀ Կառուցվածքային ստորաբաժանումների առանձին գործառույթներ համակարգող խորհրդական
Աննա Մկրտումյան	ՄՍԾ պետի առաջին տեղակալ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարություն

2. Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագիր, Բազմազավակ ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիր

3. Հարց-պատասխան

Նախագահը մինչ Խորհրդի նիստի օրակարգային հարցերին անդրադառնալը ողջունեց Խորհրդի անդամներին՝ տեղեկացնելով, որ նիստը հեռարձակվում է ուղիղ հեռարձակմամբ, որը պայմանավորված է հասարակական խորհրդի աշխատանքները հանրության լայն շերտերին իրազեկելու և համագործակցության անհրաժեշտությամբ:

Օրակարգային հարցերը ընդունելուց հետո Նախարարի խորհրդական Ռոզա Բաբայանը ներկայացրեց «Ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարությունը», մասնավորապես նշելով, որ Ռազմավարությունը առկա մարտահրավերների ժողովրդագրական զարգացման գերակայությունների և վերջիններիս հասնելու ճանապարհն է, որի նպատակն է ունենալ հավասարակշռված բնակչություն, կայուն կառուցվածք, ուղղված՝ բնակչության երկարաժամկետ մարդկային կապիտալի զարգացմանն ու կյանքի որակի բարելավմանը:

Ռազմավարության հիմքում մարդն է, իսկ նպատակը՝

- մինչև 2040 թ. ՀՀ-ում բնակչության ծերացման պրոցեսի նվազեցումը,
- ծնելիության բարձրացումը,
- ընտանիքի բարեկեցության խթանող միջավայրի ստեղծումը,
- արտագաղթի հանգեցնող դրդապատճառների նվազեցումը, բարձր որակավորում ունեցող մարդկային կապիտալի ձևավորումը և այլն:

Նշվեց, որ ռազմավարական յուրաքանչյուր նպատակ բաղկացած է բազմաթիվ ծրագրերից, որոնք ունեն հստակ գործողություններ, և որոնց իրականացման արդյունքում հնարավոր է որոշակի դրական միտումներ գրանցել ժողովրդագրական իրավիճակի զարգացման գործում:

ԱՍՀ Կառուցվածքային ստորաբաժանումների առանձին գործառույթներ համակարգող խորհրդական Գայանե Ղարագյոզյանը ներկայացրեց Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագիրը: Մասնավորապես նշվելով ծրագրի նպատակը.

- երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման աջակցություն,
- մարզային բնակավայրերում բնակարանային պայմանների բարելավման գործընթացի և երեխայի ծննդյան դեպքում հիփոթեքային վարկային բեռի թեթևացում,
- ծնելիության խթանում:

Ներկայացվեց ծրագրի ժամկետը մինչև 2026 թ. երկարաձգման, աջակցության չափի, ինչպես նաև աջակցությունը միանվագ կարգով տրամադրելու, վարկի մարմանն ուղղելու մասին դրույթները, կարևորելով ծրագրի նպատակը, ապահովելու ընտանիքների կայուն զարգացման համար անհրաժեշտ պայմաններ՝ խրախուսելով ավելի շատ երեխաներ ունենալուն, նպաստելով երեխայի աճին ու կրթությանը:

Նշվեց, որ Ծրագրի ժամկետի երկարաձգումը կամ վերափոխման հայեցակարգի մշակումը արտացոլում է ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի հիմնական նպատակները:

Այնուհետ ներկայացվեց 6 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը, նշելով, որ այն հնարավորություն է ընձեռում պետության աջակցությամբ՝ բնակարան ձեռք բերելու կամ սեփական տուն կառուցելու:

Ամփոփելով ներկայացված հարցերը՝ Նախագահը նշեց, որ կատարված օրենսդրական փոփոխությունների հիմքում ընկած է ժողովրդագրական իրավիճակի լավարկումը: Խոսելով ներգաղթի մասին կարևորվեց վերադարձողների ինտեգրման գործընթացի կազմակերպումը, տարբեր հնարավորությունների ստեղծումը՝ վերադարձից հետո հայրենիքում մնալու համար: Ներկայացվեց միջազգային պրակտիկան, տարբեր երկրներում կիրառվող մեխանիզմը, ՀՀ-ում ծնունդների քանակը, ծնելիության բարձրացմանն ուղղված քայլերը:

Նիստը շարունակվեց հարց ու պատասխանի ձևաչափով, որի շրջանակում խորհրդի անդամները բարձրաձայնեցին իրենց հետաքրքրող հարցերը, հանդես եկան առաջարկություններով:

Մասնավորապես առաջարկվեց բնակապահովման տարբեր ծրագրերի միավորման և մեկ ոլորտում ներդնելու, միասնական ծրագիր դարձնելու գաղափարը: Բարձրաձայնված հարցադրումներին Նախագահի կողմից տրվեցին հստակ պարզաբանումներ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Արձանագրությունը կազմեց՝ Հասմիկ Պետրոսյանը